Երեկ «Հայելի» ակումբում քաղաքագետներ Մանվել Սարգսյանի ու Ալեքսանդր Մանասյանի մասնակցությամբ քն-

Կոսովոն կարող է նախադեպ լինել

Արամ ՉԱՔԱՐՅԱՆ
aram@hraparak.am

նարկվում էին Լեռնային Ղարաբաղի շուրջ վերջին զարգացումները:

Ալեքսանդր Մանասյանի կարծիքով, ՄԱԿ-ում Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ Ադրբեջանի ներկայացրած եւ ընդունած որոշումը ողբերգություն չէ, իհարկե, լավ կլիներ, որ բանաձեւը տապալվեր: Բայց դա կլիներ, եթե մեր դիվանագիտական ներկայացուցչությունները եւ ԱԳՆ-ն վերջին 17 տարում համագործակցված աշխատեին: Ալեքսանդր Մանասյանը կարծում է, որ մենք բավարար քարոզչություն չենք տարել Ղարաբաղի հարցը մեր օգտին լուծելու համար, մասնավորապես, քննարկման սեղանին չենք դրել «անբեկանելի, խիստ համոզիչ, քաղաքական եւ պատմական փաստեր», որոնք կբերեին Ղարաբաղի անկախության ճանաչմանը: Ալեքսանդր Մանասյանը նկատեց, որ Ղարաբաղը 1991 թվականին կայացել է Ադրբեջանին չպատկանող տարածքներում, իսկ Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը խորհրդային Ադրբեջանը ճանաչել է դեռեւս 1920 թվականին, 1990-ին ճանաչել է Խորհրդային Միությունը: Մնում է հարգել ճանաչված իրավունքը: Մանվել Սարգսյանի կարծիքով, ՄԱԿ-ում Ադրբեջանի հաջողությունը արդյունք է Հայաստանի իշխանությունների վարած սխալ քաղաքականության՝ «Ադրբեջանը Հայաստանին միջազգային մեկուսացման ճանապարհով է տանում: Սա պարզ մարտավարություն է: Մենք պիտի ընդունենք մի կարեւոր փաստ. Հայաստանը չուներ իր հակաքայլերը, եւ ՄԱԿ-ի ամբիոնից ընդամենը սպառնալիքներ էին հնչում, թե կճանաչենք Ղարաբաղի անկախությունը կամ դուրս կգանք բանակցություններից: Գոյություն չուներ հստակ մոտեցում, թե ինչպես պետք է աշխատել նման պայմաններում»: Մինչդեռ Մանվել Սարգսյանը կարծում է, որ անելու շատ բան կար: Օրինակ. հայաստանյան կողմը կարող էր անձամբ կամ բարեկամ երկրների միջոցով պահանջել, որ Ղարաբաղի հարցի քննարկմանը Ղարաբաղը մասնակցի դիտորդի կարգավիճակով: Եթե Հայաստանը չփոխի իր մարտավարությունը, կշարունակվեն ընդունվել ոչ հայանպաստ բանաձեւեր, որոնց հետ հաշվի չնստելն անհնար կլինի:

Ալեքսանդր Մանասյանը կարծում է, որ Հայաստանի հակաքայլ կարող է լինել ՄԱԿ-ում հայանպաստ բանաձեւի ընդունմանը հասնելը, ինչը, ըստ Մանասյանի, հնարավոր է անել շատ հեշտությամբ: Եթե մեր դիվանագիտությունը պարտվեց, ու ադրբեջանանպաստ բանաձեւ ընդունվեց, որտեղի՞ց է այն լավատեսությունը, որ հայանպաստ բանաձեւ ներկայացնելու դեպքում մեր դիվանագիտությունը կհաղթի՝ հարցրինք Մանասյանին: «Մենք գտնվում ենք բեմման կետում, գուցե հույսը դա է՝ եղավ պատասխանը:

Մանվել Սարգսյանը հիշեցնում է, որ 1995 թվականին Եւրախորհուրդն առաջարկեց Ադրբեջանին անմիջապես բանակցել Ղարաբաղի իշխանությունների հետ. «Մենք քաղաքական պոտենցիալ ունենք, պետք է Ադրբեջանի առաջ նման խնդիր դնել: Ես չգիտեմ՝ ինչն է պահում մեր իշխանություններին՝ դա անել: Մենք չենք կարող միջազգային հանրությանը դեմ գնալ, բայց կարող ենք նրա հետ քայլել»: Մանվել Սարգսյանի կարծիքով ԵԱՀԿ Մինսկի խումբը կարողանում է խաղաղություն ապահովել, եւ խմբի աշխատանքը շատ կարեւոր է. «Այն հանգամանքը, որ Ադրբեջանը ամեն կերպ փորձում է կազմալուծել այդ խումբը, նշանակում է՝ նրանք ուզում են միջազգային մթնոլորտը փոխել: Իսկ Հայաստանի ներկա վիճակը պահելու քաղաքականությունը տանում է նրան, որ Հայաստանը կորցնում է իր ազդեցիկ ձայնը»: Երկու բանախոսներն էլ համոզված են, որ Կոսովոյի անկախության ճանաչումը կարող է նախադեպ լինել Ղարաբաղի ճանաչման համար: